ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾՐԱԳԻՐ

V—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաստատված է ՀԽՍՀ Լուսժողկոմատի կողմից

ՊԵՏԶԿՈՒՍ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1936

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

ԾՐԱԳԻՐ

V—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաստատված է ՀԽՍՀ Լուսժողկոմատի կողմից

Ա 23415 II

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1938

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Խորհրդային դպրոցի յուրաքանչյուր առարկայի ծրագիրը պետք է կազմված լինի հաջորդական սիստեմով, հետևաբար՝ «Մայրենի լեզվի ծրագիրը պետք է ապահովի դիտելիքների իսկապես սիստեմատիկ և ճշտորեն սահմանագծված մի ամփոփ շրջանի յուրացումը...» (Համ Կ (բ) ԿԿԿ-ի 1932 թ. ոգոստոսի 25-ի վորոշումից)։ Այդ հիմունքով այս ծրագրում ամեն մի հաջորդ դասարանի կուրսը կառուցված է նախորդ դասարանների ծրագրի հիման վրա՝ կազմելով նրա սիստեմատիկ շարունակությունը։ Ուստի՝ վոչ լրիվ և լրիվ միջնակարգ դպրոցի 5-10-րդ դասարանների ծրագիրը կազմվել է հաշվի առնելով ցածր դասարաններում անցած նյութը։ 1—4-րդ դասարանների ծրագրի համաձայն 5-րդ դասարանը մտնող յերեխան պետք է դիտենա տարրական քերականություն (պարզ ընդարձակ նախադասության վերլուծություն, պարզ հոլովում և խոնարհում, ծանոթություն բոլոր խոսքի մասերին, պարզ բառակազմություն), ուղղագրության գլխավոր հիմունքները, պետք է ունենա գրելու և խոսելու համապատասխան ունակությունները և տիրապետի կարդալու տեխնիկային։

5—10-րդ դասարաններում աշակերտը պետք է անցնի հայոց լեզվի սիստեմատիկ քերականությունը, ամբողջ ուղղագրությունը և կատարելապես տիրապետի գրավոր և բանավոր խոսքին։ Այդ նկատի առնելով 5—7-րդ դասարանների ծրագիրն ունի քերականության, գրավոր և բանավոր խոսքի ու գրքով աշխատելու բաժինները։

5-րդ դասարանում քերականությունը պետք է սկսել 3—4-րդ դասարաններում սովորած պարզ ընդարձակ նախադասության կրկնողությամբ։ Այդ արվում է այն նպատակով, վոր ձևաբանությունն անցնելու համար ոգտագործվի պարզ նախադասու-

թյան շարահյուսությունը, առանց վորի ձևաբանությունն անհասկանալի և անմատչելի կլինի։ Պետք է հիշել, վոր մեթոդիկայի տեսակետից ձևաբանության ուսուցման առանցքը պարզ նախադասության շարահյուսությունն է, վորովհետև ձևաբանական կատեգորիաներից հոլովումն ու խոնարհումը հասկանալի չեն միայն նախադասության մեջ, այլ կերպ կստացվի չոր վերացականություն և ֆորմալիզմ։

Հնչյունաբանությունից աշակերտները 1—4-րդ դասարաններում ծանոթացել են միայն ձայնավոր և բաղաձայն հնչյուններին։ Այդ քիչ է, անհրաժեշտ է ուսուցանել բաղաձայնների խմբավորումն ըստ արտաբերման տեղի և ըստ վորակի (ըստ աղմուկի և ձայնալարերի մասնակցության չափի), վորովհետև ուղղագրության ուսուցման կապակցությամբ անհրաժեշտ է լինում բացատրել, վոր մի շարք դեպքերում վորոշ հնչյունների աղդեցությամբ, իբրև լեզվական օրինաչափություն, այս կամ այն հնչյունը փոխում է իր վորակը (դ<թ, բ<փ, գ<ք, ձ<ց, ջ<չ, դ<խ, բ<ռ)։

Բառակազմության ուսուցումը կատարելիս պիտի հաշվի առնել, վոր 1—4-րդ դասարաններում յերեխաներն ընդհանուր գաղափար ունեն հոլովման և խոնարհման մասին, հետևաբար կարող են տարբերել ածանցը թեքական վերջավորությունից։ Պետք է բացատրել, վոր բառի հիմնական իմաստ պարունակող մասն արմատն է, իսկ ածանցը՝ մասնիկ, վորն արմատից նոր բառեր է կազմում նոր իմաստով, մինչդեռ հոլովման և խոնարհման վերջավորությունները նոր բառեր չեն կազմում, այլ վորոշում են բառի պաշտոնը նախադասության մեջ։ Բառակազմությունը սովորեցնելիս անհրաժեշտ է նախածանցների և վերջածանցների աղյուսակներ կազմել, ինքնուրույն կերպով նոր բառեր կազմելու վարժություններ կատարել և այլն։ Բառակազմության լավ յուրացումը բազմապատկում է աշակերտի բառապաշարը և մեծապես օժանդակում է լեզվի ուսուցման մնացած բաժիններին։

Հոլովման և խոնարհման ուսուցումը պետք է կատարել նախադասությունների միջոցով։ Հոլովները բացատրելիս պետք է առաջնորդվել նրանց արտահայտած հիմնական իմաստով, վորի լավ յուրացումից հետո՝ յուրացնել տալ նաև հոլովակերտ վերջավորությունները։ Այս վերջինների հետ պետք է կապել հոլովումները։ Ամեն մի հոլովում առանձին պետք է անցնել և դա-

սարանական ու տնային գրավոր վարժություններով յուրացնել տալ ըստ ամենայնի։

Խոնարհումը և խոնարհման վերաբերվող բոլոր հասկացողությունները (դերբայ, ժամանակ, յեղանակ, դեմք, թիվ, խոնարհում, սեռ, կերպ, բայերի անկանոն խոնարհում) նույնպես պետք է նախադասության միջոցով սովորեցնել։ Իբրև օրինակ ընտրած նախադասությունները պետք է լինեն կոնկրետ միտք արտահայտող և տվյալ քերականական հասկացողությունը ցայտուն կերպով դրսևորող։ Օրինակ՝ բայերի խոնարհման անցյալ կատարյալ ժամանակը սովորեցնելիս պետք է ընտրած նախադասության մեջ գործածվի կանոնավոր բայ (գրել, խոսել, գնալ և այլն) և վոչ յերբեք՝ ածանցավոր կամ անկանոն բայ (փախչել, ուտել և այլն)։

Քերականական կանոնը սովորեցնելով չի սպառվում քերականության ուսուցումը։ Յուրաքանչյուր կանոն սովորեցնելիս ուսուցիչը պետք է բերի օրինակներ, գրի գրատախտակին և բացատրելուց հետո առաջարկի աշակերտներին նույն ձևի օրինակներ բերել ինքնուրույն կերպով, ապա դասագրքից և վարժությունների գրքից ընտրելով համապատասխան հատվածներ, վարժություններ կատարել տա թե դասարանում և թե տանը։ Վորոշ բաժինների ուսուցման համար (օրինակ՝ դերանուն, մակբայ) անհրաժեշտ է նախ օրինակները գրել գրատախտակին, աշակերտների մասնակցությամբ վերլուծել, բացատրել և ապա յեզրակացություն հանելով՝ ձևակերպել կանոնը կամ սահմանումը։ Քերականության կանոնն անգիր անելը դեռ չի նշանակում քերականություն գիտենալ, մինչև աշակերտն այդ կանոնը կիրառելով չկարողանա ճանաչել և վերլուծել նախադասություններն ու բառերը տեքստի մեջ, կանոնը չպետք է համարել յուրացված։ Հետևաբար քերականական գրավոր և բանավոր վարժությունները պետք է համարել քերականության (ուրեմն և լեզվի ուսուցման) ամենակարևոր մոմենտներից մեկը։

Բարդ նախադասության ուսուցման համար անհրաժեշտ է ոգտագործել աշակերտների ծանոթությունը պարզ ընդարձակ նախադասությանը և դրա հիման վրա ծավալել շարահյուսության գիտելիքների խորացումը։

Կետադրությունը պետք է բացատրել շարահյուսության կապակցությամբ՝ յուրաքանչյուր կետ հիմնավորելով շարահյուսորեն, առաջնորդվելով վոչ թե ձևական մոմենտով (օրինակ,

«վոր-ից առաջ դրվում է ստորակետ»—վոր սխալ է), այլ իմաստային և քերականական սկզբունքով։

7-րդ դասարանում հիմնականում ավարտվում է քերականությունը։ 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում կատարվում է քերականական դիտելիքների ամփոփում և համակարգում, առանձնապես խորացնելով կետադրության ուսուցումը։

Քերականության առանձին կատեգորիաների ուսուցման համար պետք է նկատի առնել հետևյալ մասնակի դիտողությունները.

1. Նախադասությունն ուսումնասիրելիս պետք է բացատրել նրա հետևյալ հատկանիշները՝

ա) նախադասությունն արտահայտում է մի ամփոփ միտք (առանձին ամբողջական միտք).

բ) նախադասությունը հիմնականում արտահայտում է այն առարկան (անձ կամ իր), վորը գործում կամ լինում է և նրա գործողությունն ու յեղելությունը.

գ) նախադասությունն ունի յերկու գլխավոր անդամներ (յենթակա, ստորոգյալ), վորոնք հիմնականում ձևավորում են միտքը.

դ) նախադասությունը հանդիսանում է խոսքի քերականորեն ձևավորված միավորը (համաձայնություն, խնդրառություն, շարադասություն)։

2. Նախածանց պիտի համարել վոչ միայն ժխտական նախածանցները (ա պ, դժ, ան, ա), այլև ա ր ա, գ ե ր, հ ա կ, հ ա մ, մ ա կ, յ ե ն թ, ն ե ր, ա ր ա մ, վ ե ր և այլն։

3. Բառերը ածական պիտի համարել վոչ այն սկզբունքով, վոր նրանք ածվում, վրա յեն բերվում գոյականներին, այլ առաջնորդվելով բառերի արտահայտած իմաստով։ Ըստ այսմ՝ ածականներ են այն բառերը, վորոնք իրենց ընդհանուր իմաստով արտահայտում են առարկայի հատկությունը, վերաբերությունը և ինչ նյութից լինելը (վորակական և հարաբերական ածականները)։

4. Դերանուններ են վոչ միայն այն բառերը, վորոնք փոխարինում են գոյականին, այլև ածականին, թվականին և մակբային։

Փոխարինում ասելով չպիտի հասկանալ, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարելի՞ է ասել, թե վոր գոյականին, ածականին

կամ թվականին են փոխարինում դերանունները, այլ վոր՝ դերանուն նշանակում է կամ առարկա, կամ հատկություն, կամ գործողության պարագա, կամ թե թիվ, առանց սակայն անմիջականորեն ցույց տալու, թե ինչ առարկա է, հատկություն է, թիվ է և այլն։

Պետք է կանգ առնել նաև այն դերանունների հոլովման վրա, վորոնք կամ յեզակի չունեն, կամ հոգնակի չունեն. այդպիսիները նախադասության մեջ պետք է գործածել այլ անդամների հետ և կոնկրետ կիրառությամբ սովորեցնել։

5. Ըղձական կամ ժխտական դերբայ (այս տերմինը պայմանական է) պիտի համարել պայմանական յեղանակի ժխտական խոնարհման անփոփոխ մասը. որինակ՝ չեմ գրի, չեմ կարդա։ Պետք է բացատրել, վոր նախահոկտեմբերյան գրական լեզվի մեջ և մի քանի բարբառներում ասվում է՝ չեմ գրիլ, չեմ կարդալ, բայց մեր գրական հայերենում վերջին հնչյունն ընկել է և զոյացել է նոր (ըղձական) դերբայ։

6. Պետք է բացատրել, վոր բայի կերպեր կոչվում են բայի այն ձևերը, վորոնք խոնարհիչների (եմ և այլ) և բայահիմքի արանքում ածանց ընդունելով, միևնույն բայի արտահայտած գործողության կամ յեղելության կատարման մեկ ուրիշ կերպն են ցույց տալիս։

7. Մակբայ պետք է համարել այն բառերը, վորոնք միմիայն և կամ գերազանցապես բայի վրա յեն դրվում, արտահայտում են գործողության վորակը, չափը, ձևը և այլն։ Մի շարք մակբայներ հեշտությամբ ստուգաբանվում են, ուստի պետք է բացատրել, վոր գրաբար լեզվի մեջ դրանք յեղել են թեքման ձևեր, վորոնք աշխարհաբարում գործածվում են վորպես սկզբնական ձև, փոխելով իրենց ձևաբանական կատեգորիան. որինակ՝ գրեթե=գրե — թե, համարյա=համարեա, իհարկե=ի հարկե (բացառական հոլով), հարկավ (գործիական հոլով և այլն)։

8. Կապ կոչվում են այն բառերը, վորոնք միացնում են լրացյալը լրացման հետ, մեծ մասամբ՝ ստորոգյալ հանդիսացող բառը լրացում կազմող բառի հետ։ Կապը միանալով կապվող բառի հետ կազմում է լրացում։ Կապերն առանձին վերցրած նախադասության անդամ չեն լինում։ Պետք է բացատրել, վոր կապերից մի քանիսը նույնպես կազմվել են այլ խոսքի մասերի գրաբարյան թեք ձևերից. որինակ՝ շնորհիվ (գործիական հոլով), դեպի=դեպ ի և այլն։

9. Շաղկապները կապում են նախադասության համազոր անդամներն ու համազոր նախադասությունները միմյանց հետ և յերկրորդական նախադասությունները գլխավորի հետ։ Շաղկապն իր արժեքով և նշանակությամբ հիմնովին տարբերվում է կապերից։ Շաղկապները նույնպես նախադասության անդամ չեն լինում։

10. Մի շարք բառեր նախադասության մեջ կատարելով ուրիշ խոսքի մասերի պաշտոն, յերկարատև գործածության հետևանքով վերածվել են այլ խոսքի մասերի. որինակ՝ պարթև (ածական)—Պարթև (գոյական), հասցե (հասցե=բայ), հասցե (գոյական), մութ, խավար, հարվածային, Անուշ և այլն։

8-րդ դասարանից սկսվում է լեզվի տեսության և հայոց լեզվի պատմության տարրական գիտելիքների ավանդումը։

8-րդ դասարանում լեզվի պատմությունը պետք է կապել գրականության պատմության հետ, քանի վոր հենց այդ դասարանումն ել սկսվում է հայոց գրականության պատմությունը։ Գրականության պատմության ներածականը տալու ժամանակ պետք է զգալի չափով (շուրջ 4 ժամ) կանգ առնել նաև հայոց լեզվի պատմության խնդիրների վրա։

Այսպես, որինակ, յերբ խոսվում է գրաբարագիր գրականության մասին, պետք է խոսվի գրաբար լեզվի մասին։ Առանձին նմուշներ պետք է բերել գրաբարից և ցույց տալ այն հիմնական տարբերությունները, վոր ունի գրաբարն աշխարհաբարի համեմատությամբ։ Տարրական դաղափար տալով հայոց լեզվի ծագման մասին՝ պետք է հիշատակել հայերեն գրերի գյուտը, դիտելով այն վորպես կուլտուր-քաղաքական յերևույթ։ Հիշատակել, վոր գրաբար լեզվի մեջ կան հնուց մնացած բազմապիսի փոխառություններ, վորոնք արտահայտում են հայ եթնիկական միավորի սոցիալ-տնտեսական և քաղաքական հնագույն կապերը փոխատու ժողովուրդների հետ։

Աշխարհիկ գրականության մասին դաղափար տալիս պետք է հիշատակել նաև միջին հայերենը, վորով գրել են միջնադարյան տաղերգուները, և փոքրիկ նմուշներով ցույց տալ նրա, գրաբարի և ժամանակակից հայերենի տարբերությունները, բացատրելով, թե ինչպես սոցիալ-պատմական հարաբերությունների վորոշ ետապը ծնունդ է տվել այդ հայերենին։

Այդ լեզվի մանրամասն ծանոթությունը պետք չե, անհրա-

Ուշադրություն է միայն միջնադարյան տաղերգուների նմուշների ընթերցանության կապակցությամբ ընդհանուր գաղափար տալ միջին հայերենի և աշխարհիկ գրական լեզվի մասին։

Հայոց նոր գրականության շուրջը կարդացած ներածության հետ պիտի կապել գրական հայերենների (արևելյան և արևմտյան) հրապարակ գալը, այդ գրական հայերենների հիմնական տարբերությունը (գրաբար, բարբառներ) և ապա այն քաղաքականությունը, որ վարել է հայ բուրժուական ինտելիգենցիան այդ լեզուն զարգացնելու բնագավառում։ Հարկավոր է առանձնապես լուսաբանել Միքայել Նալբանդյանի, իբրև հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցչի, դերը գրական լեզվի կերտման և հաստատման գործում։ Պետք է բացատրել այն հիմնական տարբերությունը, որ կա մի կողմից Միքայել Նալբանդյանի և, մյուս կողմից, բուրժուական ինտելիգենցիայի մոտեցումների մեջ գրական լեզուն կերտելու հարցում։

9-րդ դասարանում պետք է հիշատակել հայերեն բարբառները և ծանոթություն տալ նրանց հիմնական տարբերի մասին։ Թվարկելով յուրաքանչյուրի բարբառները, պետք է ցույց տալ բարբառների և գրական լեզվի հիմնական տարբերությունները։

10-րդ դասարանում խորհրդային գրականության կապակցությամբ մեր լեզվի մեջ ընդգծել այն նորը, որ արդյունք է Սոցիալիստական Մեծ Հեղափոխության և հանդիսանում է ժամանակակից գրական լեզվի առանձնահատկությունը (հատկապես լեզվի այն կողմերը, որոնք արտահայտում են նրա նոր, բարձր մշակույթը)։ Դրա հետ միասին պետք է բացատրել մեր լեզվի մեջ յեղած նոր փոխառությունները, համեմատելով այն նախահոկտեմբերյան գրական լեզվի կատարած փոխառությունների հետ։

Այստեղ պետք է ցույց տալ, թե ինչպես մեր գրական լեզուն արտահայտում է «ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական» կուլտուրայի Ստալինյան թեզը։

Դրանից հետո պիտի բացատրել ընկեր Ստալինի դրույթը համաշխարհային միասնական լեզվի ստեղծման մասին։

Գրավոր և բանավոր խոսքի ուսուցումը 5—10-րդ դասարաններում՝ կառուցվում է տարրական դպրոցի ծրագրի վրա, իբրև նրա շարունակություն։ 5—6 և 7-րդ դասարաններում գրավորի տեսակները տրվում են ըստ հաջորդական դժվարության։ Չեն հիշատակվում գրավորի այնպիսի տեսակներ, որ կարելի յե

տալ տարրական դպրոցում։ Յեթե տարրական դպրոցի գրավորների նպատակն և գերազանցապես ուղղագրություն, ինչպես և շարադրելու տարրական ձևեր սովորեցնելը, ապա միջնակարգ և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում գրավորների տիպերը նպատակ ունեն գերազանցապես շարադրել սովորեցնելը՝ լրացնելով միաժամանակ ուղղագրական գիտության թերությունները։ Ուստի 5, 6 և 7-րդ դասարաններում հերթական կերպով տրվում են շարադրության զանազան տիպերը, սկսած պարզ պլանի ոգնությամբ շարադրություն գրելուց մինչև ամբողջական յերկերի գրական վերլուծությունը։ Յերբ, սակայն, կնկատվի, վոր տվյալ դասարանը պահանջված մակարդակին չի համապատասխանում, ուսուցիչը պետք և ոգտագործի նաև 1—4 դասարանների գրավորների տիպերը։ 8-րդ դասարանից սկսած գրավորները և նրանց տեսակները բղխում են գրականության պատմության նյութից և ուսուցումից։ 5—7-րդ դասարաններում տրված են նաև քերականության գրավոր վարժություններ, վորոնց նյութը պետք և լինի քերականության այն բաժինը, կանոնը կամ սահմանումը, վորն ավանդվում և տվյալ որը կամ տվյալ դասին։

5—7-րդ դասարանների հայոց լեզվին տրված ժամերի մոտ 50 տոկոսը պետք և տրամադրել քերականությանը։ 5 և 6-րդ դասարաններում 6-որյակում առնվազն մեկ գրավոր պետք և տալ, չհաշված քերականական գրավոր վարժությունները և ստուգողական թելադրությունը։

7-րդ դասարանում պետք և տալ առնվազն յերկու վեցորյակում մեկ գրավոր։

Ծրագրում քերականությունն ու ուղղագրությունը, գրավոր և բանավոր խոսքը և գրքով աշխատանքը տրված են առանձին բաժիններով, բայց այդ չի նշանակում, վոր ուսուցումը պետք և կատարել հերթական կերպով, ըստ բաժինների։

Ընդհակառակը, հայոց լեզվի դասը պետք և ընդգրկի զուգահեռ աշխատանքներ թե քերականության բաժնից, թե գրավոր ու բանավոր խոսքի և թե գրքով աշխատելու բաժիններից։

Յերբեմն էլ քերականության դասը, վոր հագեցած պետք և լինի գրավոր և բանավոր վարժություններով, պետք և հերթափոխի գրավոր խոսքի ուսուցմանը, գրքով աշխատանքին։

ԾՐԱԳԻՐ

V—X ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ԳԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Նախադասություն

Խոսքը վորպես մտածության արտահայտություն. նախադասություն. նախադասության գլխավոր անդամները՝ յենթակա և ստորոգյալ. նախադասության մյուս անդամները վորպես լրացումներ։

Բ. Հնչյունաբանություն

Բառ. վանկ. հնչյուն. տառ. հայերենի այբուբենը. ձայնավորներ և բաղաձայններ, հայերենի բաղաձայն հնչյունների ստորաբաժանումները՝ ա) ըստ արտաբերման տեղի և բ) ըստ վորակի՝ ըստ աղմուկի ու ձայնալարերի մասնակցության չափի (ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ)։ Հնչյունափոխություն. տողադարձ։

Գ. Բառագիտություն

Բառերի տեսակներն ըստ կազմության. արմատ և ածանցպարզ բառեր, ածանցավոր բառեր, հայերենի կարևոր ածանցները, նորագույն հայավումներ։ Հիմք և վերջավորություն։ Բառերի տեսակներն ըստ իմաստի և արտաքին հնչյունական կողմի՝ նույնանիշ, հականիշ, համանիշ, համանուն բառեր։

Դ. Ուղղագրություն

Ը ձայնավորի ուղղագրությունը. յա, յու, յո, յե, այ, ոյ, ույ, եյ յերկհնչյունների ուղղագրությունը. յ ձայնակապի ուղղագրությունը։ իա և յա, իա, իե, իու, իո յերկձայնավորների

ուղղագրությունը։ Բաղաձայնների ուղղագրությունը. ձայնեղների վերածվելը շնչեղ խուլերի. Ր և Ղ հնչյունների դերն այդ դեպքում։ Ոտար բառերի ուղղագրություն։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մասերը.—Գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ և ձայնարկություն։

ԳՈՅԱԿԱՆ.—Առարկաներ. գոյականներ. գոյականների գործածությունը նախադասության մեջ. հատուկ և հասարակ գոյականներ. գոյականների հոլովումը և գոյականների առումները՝ անձ և առարկա. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովները և նրանց հիմնական ֆունկցիաները. գոյականների թիվը. հոլովումներ. Ի, ՈՒ, ԱՆ, ՅԱՆ, ՈՋ, ՈՐ, ՎԱ, Յ հոլովումները, հարադիր գոյականների հոլովումը. գրաբար հոլովաձևերի մնացորդներ. գոյականակերտ ածանցները և նրանց ուղղագրությունը։

ԱԾԱԿԱՆ.—Ածականի տեսակները՝ վորակական և հարաբերական. համեմատական աստիճաններ. ածականների գործածությունը նախադասության մեջ. ածականի գործածությունը գոյականի հետ. ածականի հոլովումը. ածականի վերածումը գոյականի և ընդհակառակը. ածականակերտ ածանցներ (ային, ական և այլն). ածականների ուղղագրություն։

ԹՎԱԿԱՆ.—Թվականի տեսակները՝ քանակական և դասական. թվականների գործածությունը նախադասության մեջ. դասականների ածանցները. թվականների գործածությունը գոյականի հետ. թվականների հոլովումը. թվականների ուղղագրություն։

ԴԵՐԱՆՈՒՆ.—Դերանունների տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, վորոշյալ, ժխտական կամ բացասական. դերանունների գործածությունը նախադասության մեջ։ Դերանունների հոլովումը. անեղական դերանուններ, անհոդնակի դերանուններ. դերանունների ուղղագրությունը։

2· ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Հոդվածի գրական գեղարվեստական պարզ վերլուծություն (բանավոր). տեղեկատու գեկուցում (բանավոր). հոդվածի բովանդակության գրավոր շարադրություն. հոդվածն ընդարձակելու և

համառոտելու գրավոր հմտություն. նախորոք մշակված պլանի ոգնությամբ պարզ թեմայի մասին գրավոր շարադրություն (անցած նյութի, նոր ծանոթացած նյութի, կարդացած հոդվածի, կինոյում, թատրոնում և այլուր տեսածի ու լսածի շուրջը, և այլն). ինքնակենսագրություն. պարզ ընդարձակություն. քերականական և ուղղագրական գրավոր վարժություններ տանը և դասարանում. գործնական գրություններ (դիմում, հայտարարություն, և այլն). թելադրություն (բացատրական, ուսուցողական, ստուգողական): Միևնույն նյութը 1-ին, 2-րդ և 3-րդ դեմքերով գրավոր պատմելու հմտություն:

3. ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծանոթություն գրքին՝ անուն, հեղինակ, հրատարակչություն, հրատարակության վայր, տարեթիվ, տիրաժ, առաջաբան, ցանկ, բաժիններ, գլուխ և այլն:

Ծանոթություն գրադարանից գիրք ստանալու կարգին. բացատրական և ուղղագրական բառարաններից ոգտվելու հմտություն. կարդացածի կարևոր և անհրաժեշտ տեղերն առանձնացնելու հմտություն, թե ամբողջ հատվածի և թե մի արդացի մեջ:

6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ձևաբանություն

Բայ.—Բայի ձևերը՝ դերբայական և յեղանակային. դերբայների տեսակները՝ անորոշ, անկատար, պատանի, վաղակատար, հարակատար, յենթակայական և ըղձական. դրանց իմաստը և գործածությունը, բայի յեղանակային ձևը. դեմք, թիվ, ժամանակ, յեղանակ: Բայերի գործածությունը նախադասության մեջ:

Խոնարհում. սահմանական, հրամայական, ըղձական, պայմանական կամ յենթադրական և հարկադրական յեղանակները, սահմանական յեղանակի ժամանակները, հրամայական յեղանակը, ըղձական, պայմանական և հարկադրական յեղանակների կազմությունը և ժամանակները, ուղղագրություն:

Բայի եկ և գալ խոնարհումը (առաջին և յերկրորդ խոնարհում): Ուղղագրություն:

Բայի ժխտական խոնարհումը և նրա ուղղագրությունը, բայի տեսակները՝ չեզոք և կրավորական. բայի կերպերն ըստ կազմության՝ սոսկական, կրավորական, պատճառական, բազմապատկական. գալ, տալ, լալ, ուտել և լինել անկանոն բայերի խոնարհումը. ենալ, անալ, նել և չել վերջավորություն ունեցող բայերի խոնարհումը. գլխավոր և յերկրորդական (բաղադրյալ) ժամանակներ։

Մակբայ.—Մակբայի տեսակները. մակբայի տարբերությունը ածականից. մակբայների կազմությունը և պատմական տեղեկություններ նրանց մասին. մակբայների գործածությունը նախադասության մեջ։

Կապ.—Կապերի տեսակները, նախադրություն և հետադրություն. դրանց հոլովական խնդրառությունները և գործածությունը. կապական բառեր, պատմական տեղեկություններ կապերի մասին։

Շաղկապ.—Շաղկապների տեսակները. համադասական և ստորադասական։

Զայնարկություն.—Զայնարկության առանձնահատկությունները մյուս խոսքի մասերի համեմատությամբ։

Խոսքի մասերի փոխադարձ փոխանցումները։

Նախադասության վերլուծությունն ըստ խոսքի մասերի։

Բ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Մտածություն, խոսք, նախադասություն. պարզ և բարդ նախադասություն. պարզ նախադասության գլխավոր անդամները՝ յենթակա և ստորոգյալ, նրանց միասնությունն ու համաձայնությունը. համառոտ նախադասություն. ընդարձակ նախադասություն. զեղչված յենթակայով և զեղչված ստորոգյալով նախադասություններ. ընդարձակ նախադասության գլխավոր անդամների լրացումները։ Յենթակայի լրացումները՝ վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ. ստորոգյալի լրացումները՝ խնդիրներ և պարագաներ. ուղիղ և անուղղակի խնդիրներ. տեղի, ժամանակի, չափի ու քանակի, ձևի, պատճառի, հիմունքի և նպատակի պարագաներ։ Հոլովների ֆունկցիաները։ Սեռական և հայցական հոլովները հայերենում և նրանց առանձնահատկությունները։ Լրացման լրացումներ. վորոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, կողմնակի խնդիրներ և պարագաներ. 2-րդ, 3-րդ, 4-րդ և այլ աստիճանի լրացումներ. նրանց ֆունկցիան նախադասության մեջ։ Կապակցություն (համաձայնություն և շարադասություն)։

Հարցական, պատմողական, բացականչական և հրամայողական նախադասություններ. կետադրություն. կոչական բառով նախադասություններ. ձայնարկությունների գործածությունը բացականչական նախադասությունների մեջ. կետադրություն. միջանկյալ բառերով նախադասություններ. հաստատական և ժխտական նախադասություններ. կետադրություն։

Չեղչված անդամներով նախադասություններ. անդեմ և անենթակա նախադասություններ· բաղմակի կամ համադաս անդամներով նախադասություններ. կետադրություն։

2· ԲԱՆԱՎՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Բանավոր զեկուցում պլանով կամ կոնսպեկտով. շարադրության մանրամասն գրավոր նախագիծ կազմել նախաբանով և վերջաբանով. գեղարվեստական յերկի գրավոր պարզ վերլուծություն. բանավոր և գրավոր պարզ համեմատական ընութագրություն. ինքնուրույն շարադրություններ (ստեղծագործական և այլն), գործադրելով լեզվի պատկերավորության միջոցները՝ համեմատություն, փոխաբերություն, մակդիր, այլաբանություն և այլն։ Նկարագրական ընույթի ինքնուրույն գրավոր աշխատանքներ. գրել տպավորություններ՝ կարդացած գրքերից, տեսած կամ լսած յերևույթներից, ճանապարհորդությունից, եքսկուրսիայից և այլն։ Ստուգողական թելադրություն. քերականական գրավոր վարժություններ. գործնական գրություններ (արձանագրություն, տեղեկանք, ստացական)։

3· ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոնսպեկտ կազմելու հմտություն. սահմանված թեմայի շուրջը զանազան գրքերից ցիտատներ հավաքելու հմտություն։

Կարդացածի տեքստը համառոտել և ընդարձակել։

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Շարահյուսություն

Բարդ նախադասություններ, միավորյալ նախադասություններ, բաղմակի յենթակայով և բաղմակի սորոգյալով միավորյալ նախադասություններ. կետադրություն։

Համադասական նախադասություններ. միջանկյալ նախադասություններ. կետադրություն։

Բարդ ստորադասական նախադասություններ. նրանց կազմությունը. գլխավոր և յերկրորդական նախադասություններ. յերկրորդական նախադասությունները վորպես գլխավոր նախադասության անդամներին՝փոխարինողներ և լրացնողներ. նախադաս, միջադաս և վերջադաս յերկրորդական նախադասություններ. ստորադասական շաղակապների գործածությունը։

Կետադրությունը բարդ նախադասություններում։ Յերկրորդական նախադասությունների տեսակները։Դերբայական լրացումը. կողմնակի յենթակա և կողմնակի լրացումներ։ Բարդ նախադասության վերածումը պարզի՝ դերբայական լրացման և կողմնակի յենթակայի միջոցով. դերբայների գործածությունն այս դեպքերում։

Քերականական վերլուծություն ըստ նախադասության տեսակների, ըստ նախադասության անդամների և ըստ խոսքի մասերի։

Բ. Կ ե տ ա դ ր ո ւ թ յ ո ւ ն

Տրոհության, բացահայտության և առոգանության նշանները. ստորակետի գործածության բոլոր դեպքերը. միջակետի և բութի գործածության բոլոր դեպքերը. գիծը և նրա գործածությունը հայերենում, բազմակետի, չակերտի, փակագծի, հարցականի, բացականչական և յերկարացման նշանների գործածությունը հայերենում։

2. ԲԱՍԱՎՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Յելույթներ ունենալիս կարողանալ թե կրճատումներով և թե բարդ մեջբերումներ կատարել. ցիտատները ոգտագործելու ունակության խորացումը. վերլուծական գրավոր շարադրություններ և համառոտագրություն։ Գրական տեսակների գրավոր վերլուծությունը։ Դասարանում մշակած ամբողջական յերկի գրական-գեղարվեստական գրավոր վերլուծություն։ Գյուղի և քաղաքի սոցիալիստական շինարարության գանազան մոմենտների գրավոր վերարտադրությունը (ինքնուրույն աշխատանք)։ Բնության նկարագրություններ։ Ազատ թեմայով շարադրություն։ Քերականական և պարզ վոճաբանական գրավոր վարժություններ։ Ստուգողական թելադրություն։

3. ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Կարդացածի կամ գրելիքի շուրջը թեզիսներ և բանաձևեր կազմելու հմտություն (յեզրակացություններ և առաջարկություններ)։ Բարդ և ընդարձակ պլան կազմելու հմտություն. առձեռն

բառարանից օգտվելու վարժություն. կարդացած գրքերի բիբլիոգրաֆիա կազմելու հմտություն։

8-րդ ԴԱՍԱՐԱՆ

1. ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանության, բառագիտության և ձևաբանության համակարգումը։

Կետադրություն.—Կետադրության նշանակությունը գրավոր խոսքի համար։

Առոգանության նշանները և նրանց գործածությունը. շեշտ, բացականչական նշան, հարցական նշան։

Բացահայտության նշանները և նրանց գործածությունը.—Բազմակետ, կախման կետեր, չակերտ, փակագիծ, անջատման գիծ, միացման գծիկ։

Տրոհության նշանները և նրանց գործածությունը.—Վերջակետ, միջակետ, ստորակետ, բութ, գիծ։

2. ԲԱՆԱՎՈՐ ՑԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Ամբողջական գեղարվեստական յերկերի շուրջը գրավոր վերլուծական շարադրություններ. տիպերի վերլուծություն (գրավոր և բանավոր). գրողների բանավոր և գրավոր բնութագրություններ. գեկուցումներ կազմելու և կարդալու պրիոմները (կոնսպեկտով և թեզիսով)։

Առաջարկված թեմաների շուրջը շարադրություն գրելու հմտություն, գործադրելով պարզ հետազոտական բնույթ կրող յեղանակներ. նկարագրություններ, ուրվագծեր, ստուգողական թելադրություն։

3. ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Գրքի մշակման ու օգտագործման լիակատար գիտություն. կոնսպեկտ, տեքստուալ (ընդգրային) կոնսպեկտ, պլան (պարզ և ընդարձակ), համառոտություն, ցիտատներ (քարտային սիստեմ)։

Յերկու և ավելի աղբյուրներից օգտվելու ունակություն. մատենագրական (բիբլիոգրաֆիկ) և այլ ուղեցույցներից օգտվելու հմտություն. բառարաններով աշխատելու ունակություն։

Հ 23715
ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱՎՈՐ ՅԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Շարահյուսության համակարգումը՝ համառոտ, ընդարձակ պարզ, միավորյալ, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններ. կետադրություն. կանգ առնել առանձնապես ստորակետի գործածության վրա. վոճարանության տարրեր. ռեֆերատներ կազմելու վարժություն. հեղինակների մասին գրավոր շարադրություն. գրական-գեղարվեստական յերկերի գրավոր և բանավոր համեմատական ընութագրություններ. ստուգողական թելադրություններ։

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Քերականության, ուղղագրության և կետադրության ամփոփումը։ Բանավոր զեկուցումներ և գրավոր ռեֆերատներ կազմելու հմտություն. գրողների համեմատական ընութագրություններ (գրավոր և բանավոր), գրական հոսանքների ընութագրում և համեմատություն. քերականական գրավոր վարժություններ. քերականական խնդիրների լուծում. ստուգողական թելադրություն։

ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐ

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

«Լեզուն նույնքան հին է, որքան և գիտակցությունը. լեզուն հենց գործնական, ուրիշ մարդկանց համար գոյություն ունեցող, ուրեմն ինձ համար ևս գոյություն ունեցող իրական գիտակցություն է» (Մարքս), «Լեզուն մարդկային հաղորդակցման կարևորագույն միջոց», լեզվի ինչպես և գիտության ծագումը «ուրիշ մարդկանց հետ հաղորդակցելու անհրաժեշտությունից ու կարիքից» (Լենին)։ Տարբեր լեզուների փոխազդեցությունները, նմանություններն ու տարբերությունները։ Լեզուն որպես զարգացման յենթակա սոցիալ-պատմական յերևույթ։ Փոխառյալ բառերը և փոխառության սոցիալական պատճառները. հին փոխառություններ (յեկեղեցի, կաթողիկոս, բազին, գժոխք, մարգարե), նոր փոխառություններ (տրակտոր, կոլեկտիվ, ռադիո, կոմբայն, արտել և այլն)։

Գրաբար լեզուն և միջին հայերենը որպես ֆեոդալական

հասարակության տարբեր շրջանների գրական լեզուներ։ Միջին հայերենով գրված յերկերն ու նրանց տեսակները։

Հայ բուրժուական հասարակության կազմակերպման շրջանը. աշխարհաբարը վորպես գրական լեզվի և բարբառների միասնություն։ Աշխարհաբարի և գրաբարի պայքարը 19-րդ դարի կեսերին. գրական աշխարհաբարը, գրական հայերենի հաստատման հիմնական պատճառները։ Նալբանդյանի և Նազարյանի լեզվագիտական ըմբռնումները։ Աշխարհաբար գրականին նախորդող շրջանները. «Հյուսիսափայլ»-ի դերը նոր գրական լեզուն որինականացնելու և կերտելու ասպարեզում։ Հայոց գեղարվեստական գրականության դերը գրական հայերենի զարգացման և տարածման գործում։

Նախահոկտեմբերյան գրական հայերենի ուղղագրությունը նրա բնույթը։

9-րդ ԴԱՍԱՐԱՆ

Հայերենի բարբառների հիմնական բաժանումը ԿԸ, ՈՒՄ, և ԵԼ (ԵՍ) ճյուղերի. հայերենի բարբառների պարզ թվարկումն ու զաղափար նրանց մասին։

Գրական լեզվի և բարբառների փոխհարաբերությունը. հայ գրական լեզվի արևելյան և արևմտյան ճյուղերի տարբերությունները։

10-րդ ԴԱՍԱՐԱՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունն և Հայաստանի խորհրդայնացումը։

Հայերենի ուղղագրության ռեֆորմը և նրա բնույթը։

Զեով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի զարգացման ստալինյան դրույթը։ Հայոց լեզվի զարգացման նոր ետապը Հայաստանի խորհրդայնացումից հետո։

ա) Նոր բառերի ստեղծում.

բ) Բառակազմության նոր ձևերի ստեղծում.

գ) Բառերի իմաստի փոփոխություն.

դ) Բուրժուա-կղերական աշխարհայացք արտահայտող բառերի մահացում.

յե) Լեզվի դեմոկրատացում և մասսայականացում։

Ընկեր Ստալինը համաշխարհային միասնական լեզվի հարցի մասին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Բացատրական	3
Ծրագիր	11

90058

Գլխ. խմբագիր՝ Գ. Սեակ
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահրազյան

Գլավլիտի լիազոր. Ա—3077 Հրատ. № 4557.
Պատվեր 281. Տիրաժ. 5000.
Թուղթ 62×94. Տպագր. 1¼ մամ.
Մեկ մամուլում 38400 նիշ.
Հանձնված է արտադրության 17 մարտի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 31 մարտի 1938 թ.
Գինը 30 կոպ.

Պետհրատի 1 տպարան, Երևան, Լենինի փող. 65.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003254

226

А II / 23715

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

064.

ПРОГРАММА АРМЯНСКОГО ЯЗЫКА

для V—X классов

Гиз Арм. ССР, Ереван, 1938

Просп. 1940 г.